

Языковая картина мира

*Материалы 6-ой и 7-ой международных
конференций, организованных в рамках*

Недели Франкофонии

Աշխարհի լեզվական պատկերը

Ֆրանկոֆոնիայի շաբաթվա շրջանակներում

կազմակերպված 6-րդ և 7-րդ միջազգային

գիտաժողովների նյութեր

Երևան

2015

ՀՏԴ 81 : 06

ԳՄԴ 81

Ա 653

Տպագրվում է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագրական կազմ՝

- Բարլեզիգյան Արամ, բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր
- Գրիգորյան Կարինե, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ
- Կոլեսնիկով Վաղիմ, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ
- Ղազարյան Մելանյա, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ
- Մանուկյան Նաիրա, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ
- Ռեդուան Նաժիր, բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ա 653 Աշխարհի լեզվական պատկերը,
Ֆրանկոֆոնիայի շաբաթվա
շրջանակներում կազմակերպված
6-րդ և 7-րդ միջազգային գիտաժողովների
նյութեր. – Երևան: Լինգվա, 2015. - 307 էջ

ISBN978-9939-56-132-5

ՀՏԴ 81 : 06

ԳՄԴ 81

© Լինգվա-, 2015

Մուսաննա ՏԻՈՅԱՆ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարան

**ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ – ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հիմնաբառեր՝ թարգմանություն, բառացի և տողացի թարգմանություն, թարգմանության առաքելություն, բանաստեղծական մտերմություն, մշակույթների հոգեհարազատություն, ժողովուրդների բարեկամություն:

Այս երկու նշանավոր բանաստեղծների շփումները սուսկ անձնական, հաղորդ հոգիների հոգեհարազատության բնույթ չեն կրել. դրանք ամենից առաջ երկու մշակույթների, երկու ժողովուրդների գեղեցիկ բարեկամության օղակ են հանդիսացել, և այն էլ ցարական բռնակալության դաժան ժամանակաշրջանում:

Դրանք երկու բանաստեղծների անմեկնելի նույնապրումի, լազվամտածողության ամենակատարյալ դրսևորումներն են, ինչի արդյունքում կայացել են փոխադարձ թարգմանությունները՝ որպես ներանձնական հոգեվիճակների և ապրումների ստեղծագործական յուրովի բացահայտում՝ առանձնապես Տերյանի պոետական անհատականությամբ: Մեկդարյա վաղեմության այս թարգմանությունները այնպիսի ներհյուս ներդաշնակության մեջ են Տերյանի բանաստեղծական ներաշխարհի հետ, որ դրանք դժվար է անգամ թարգմանություն կոչել [5, էջ 3]: Սա՛ է թարգմանության բուն առաքելությունը. երբ մի ժողովրդի կողմից այլ մշակույթի արժեքն ընկալվում է որպես իրենը, հարազատը. հար ու նման Թումանյանի՝ Պուշկինյան «Չմեռվա իրիկունի» թարգմանությանը:

Երբ շուրջ հարյուր տարի առաջ Մոսկվայի հայկական կոմիտեի ներկայացուցիչները Վալերի Բրյուսովին խնդրել են խմբագրել հայկական պոեզիայի («Поэзия Армении») ռուսերեն

թարգմանությունը, սկզբում նա կտրականապես մերժել է, քանի որ դա իր համար բոլորովին անձանոթ մի ոլորտ է եղել, և, բացի այդ, դրանում նա իր համար մի կարևոր, արժեքավոր զբաղմունք չի տեսել: Բայց երբ անսպառնալիք մուսաստանի մտավորական հայերի երկար թախանձանքներին ի վերջո համաձայնվել է, ապա մի պայմանով, որ հնար տան սովորել հայերենը և ուսումնասիրել, գոնե ընդհանուր գծերով, հայ ժողովրդի պատմությունն ու նրա գրականությունը: Դրանից կես տարի անց, որը անբավարար է համարել երկուս ու կես հազարամյա պատմությանը տեղեկանալու, այնուամենայնիվ նա հնարավոր է համարել ծանոթանալ հայ գրականությանը՝ սկզբնավորման օրերից մինչ իր ժամանակները, իր համար հայտնաբերել է մի անձանոթ մոլորակ, այլև հնարավոր է համարել ոչ միայն իր, այլև ուսու ընթերցողների համար լրացնել այն բացը՝ terra incognita-ն, որ համարվել է հայկական պոեզիան՝ սկզբավորման ժամանակներից մինչև իր օրերը [3, էջ 7-8]:

Այդ հանձնարարությունը նա պատվով է կատարել. նախ դեկավարել է թարգմանության աշխատանքները՝ ընդգրկելով Ռուսաստանի ամենահմուտ թագմանիչներին ու պոետներին՝ ինքն անմիջական մասնակցություն ցուցաբերելով այդ գործում, ապա, հանդես է եկել խմբագրի խոսքով՝ ուղղված ընթերցողներին, շարադրել է հրատարակման խնդիրները և գրել պատմական-գրական ծավալուն ակնարկ (94 էջ)՝ «Հայաստանի պոեզիան և նրա ամբողջական պատկերը դարերի հոլովությամբ» վերնագրով:

1915 թ. սեպտեմբերի 10-ին Ֆեոդոր Սոլովյովին գրած նամակում Բրյուսովը գրում է.

«Կարելի է, թե Դուք չեք մոռացել, որ սիրով համաձայնություն սվեցիք որևէ թարգմանություն անել «Поэзия Армении» ժողովածուի համար: Այժմ ես հանձն եմ առել խմբագրել այդ ժողովածուն (որպիսի նպատակով, մի քանի ամիս, եռանդագին ուսումնասիրում էի հայերեն լեզուն) և իմ խնդիրը միացնում եմ խմբագրության բոլոր անդամների թախանձանքներին: Դուք մեզ

բոլորիս շատ կպարտավորեցնեք, այսպես ասած, «իրականացնել»
ձեր համաձայնությունը:

Այս նամակի հետ ես ուղարկում եմ Վահան Տերյանի
բանաստեղծությունը (ի միջի այլոց նա թարգմանել է ձեր
բանաստեղծությունները հայերեն) – տեքստ - տառադարձությունը և
տողաթարգմանությունը: Ինձ թվում է, որ այս տողերը
բավականաչափ լավ են, որպեսզի արժանի լինեն ձեր
թարգմանությանը: Սակայն, եթե բանաստեղծությունը ձեր սրտով չէ,
ես սիրով կուղարկեմ մեկ ուրիշը, կամ մի քանիսը՝ ընտրեք, որը
կամենաք և վերջապես – մի ամբողջ շարք, եթե Դուք կկամենաք մեզ
համար թարգմանել և ոչ թե մեկ, այլ երկու կամ երեք կամ ավելի...»:

Իսկ Վահան Տերյանը, դրանից երկու տարի առաջ՝ 1913 թ.
մարտի 30-ին Բրյուսովին ուղարկած նամակում գրում է.

«...Ուղարկում եմ տպված թարգմանությունները (թվով 4),
որոնցից երկուսը իմն է: Չիմանալով ձեր հասցեն, ես անկարող եղա
այդ անել ավելի շուտ, իսկ տեղեկանալ հասցեատանը ժամանակ
չունեցա: Լուսանկարն իմ թարգմանություններով հանդերձ (10
ոտանավորների) 1. Քաղաքին, 2. Մենություն, 3. Անառակ որդին, 4.
Հուշերի ժամ, 5. Օրհնություն, 6. Օրորոցի երգը, 7. L'ennui de vivre, 8.
Փախուստ, 9. Տխուր երեկո, 10. Լինել մենակ (այս երկու
թարգմանություններն արդեն տպված էին, սակայն կոմպլեքսի
համար դրանք ուղարկում եմ, ապա գուցե և նորից երկու-երեք
թարգմանություններ, եթե հասցնեմ մշակելը): Այս բոլոր
թարգմանությունները, ինչպես և լուսանկարը նույնպես նաև մի
կարճատև ակնարկ ձեր անձնավորության և պոեզիայի մասին,
ուղարկում եմ Վենետիկ, ուր սուրբ Ղազար կղզու վրա հիմա
տպագրվում է առաջ Թիֆլիսում հրատարակվող «Գեղարվեստ»
ժուռնալը...»:

Հայկական մամուլում Վ. Բրյուսովի մասին առաջին անգամ
հանդես է եկել Վահան Տերյանը, երբ 1913 թ., «Գեղարվեստ», 5-րդ
համարում գրել է. «Անշուշտ բոլորովին անհայտ և անձանթ մի

անուն չէ հայ գրասեր ընթերցողի համար Վալերի Բրյուսովի անունը: Սակայն ռուս գրականության մեջ այս հեղինակը՝ ըստ իս՝ դեռևս չի գնահատված ըստ արժանվույն, թեև նրա անունը արդեն պատվավոր տեղ է գրավում լավագույն ռուս գրողների շարքում: Գրական ասպարեզ գալով 90-ական թվականներին՝ նորագույն գրական շարժման առաջին և լավագույն գործիչներից մեկը հանդիսացավ: Իր ընկերակիցների հետ միասին՝ և ավելի քան նրանցից որևէ մեկը՝ նա սկզբում ծաղրի ու հալածանքի առարկա դարձավ դեղին մամուլի (գեղարվեստի այդ մշտական ու ռիսերիմ թշնամու) ճահճացած ու ծանծաղամիտ բանակի առջև:

Սակայն երկար տարիների արդյունավոր ու ցայտուն ստեղծագործությամբ ստիպեց իր ռիսերիմ թշնամիներին անգամ հասկանալու և գնահատելու նրան: Անշուշտ ապագային է մնում այս հեղինակի իսկական գնահատությունը...»:

Հարկ ենք համարում այստեղ հավաստել, որ շուրջ մեկ դար անց, մեր օրերում էլ Վալերի Բրյուսովն այնքան է սիրված ու գնահատված, այլև ուսումնասիրված նաև Հայաստանում, որ մեր Համալսարանում անխափան գործող ամենամյա Բրյուսովյան ընթերցումները ամեն անգամ նոր էջեր են բացում սիրելի բանաստեղծի գործունեության անսահմանափակ էջերում (նշենք միայն պրոֆ. Մ. Ամիրխանյանի անձնվեր աշխատանքներն այդ ոլորտում, որ գովասանքի ու հացմունքի են արժանի):

Բացի նշված ներածականից, «Գեղարվեստի» նույն 5-րդ գրքում զետեղվել են Վ. Բրյուսովի՝ թվով վեց բանաստեղծությունները՝ Տերյանի թարգմանությամբ:

Իր հերթին Բրյուսովը աննախադեպ ուշադրությամբ է վերաբերվել Տերյանին՝ բարձր գնահատելով նրա բանաստեղծական ձիրքը, լեզվի, գրականության, որոշ չափով նաև պատմության բնագավառներում նրա գիտակությունը և վերջապես գերազանց թարգմանությունները ռուս և ֆրանսիացի նորագույն պոետների

երկերից: «Поэзия Армении» ժողովածուի մեջ նա հետևյալ փայլուն բնութագիրն է տվել Տերյանի մասին.

«Ռուսա-Հայաստանի ամենաաչքի ընկնող գործիչը՝ երիտասարդ բանաստեղծների մեջ, պետք է համարել Վահան Տերյանին... Գրական ասպարեզ գալով իր բանաստեղծությունների առաջին ժողովածուով 1908 թ., սակայն մի շարք բանաստեղծություններում, հրապարակված ավելի ուշ, զգալապես զարգացնելով և խորացնելով իր պոեզիայի թեմաները, Տերյանը ընթերցողների և քննադատության կողմից ճանաչվեց որպես աներկբայելի մեծություն, թեպետ նրան գնահատելու հարցում տարբեր կարծիքներ կային: Որպես սիմվոլիստների աշակերտ, Տերյանը փորձեց հայ պոեզիային յուրացնել այն ամենը, ինչ ձեռք է բերել եվրոպական պոեզիան (առանձնապես ռուսականը և ֆրանսիականը) վերջին տասնամյակների ընթացքում: Այսպես, Տերյանը շոշափեց այնպիսի թեմաներ, որոնք առաջ դուրս էին մնում հայ պոետների տեսահորիզոնից ... Վերջապես մի քանի թարգմանություններ տվեց ռուս և ֆրանսիացի նորագույն պոետների երկերից: Այս բոլոր նկրտումներով Տերյանը ավելի շատ հարազատ է արևմտահայ պոետներին, սակայն նա հավատարիմ մնաց «ռուսահայերի» շկոլայի հիմնական հոսանքին ...» [3, էջ 91]:

Իսկ երբ Վահան Տերյանը մտադրվել է մի շարք թարգմանություններ տալու ռուս նորագույն պոետներից, նա սկսել է Վալերի Բրյուսովից: Նրա մեջ Տերյանը տեսնում էր ոչ միայն խոսքի մեծ վարպետի, զրականագետի ու թարգմանչի, այլև իր համար ձգտելիք անհասանելի կատարի: Ի հաստատումն ասվածի՝ բերենք նրա՝ Բրյուսովին նվիրված հետևյալ տողերը

Ես դեռ պատանի սիրեցի քո խիստ,
Ցուրտ հյուսիսային մտասույզ լեզուն,
Եվ տեսա որքա՞ն ահեղ է կիզում
Կրակը թաքուն տողերից հանգիստ:

Նա ձգտել է թարգմանությունները կատարել բնագրերից՝ ֆրանսերենից, ռուսերենից ...

Նշանակալից է, որ Տերյանին զբաղեցրել են թարգմանության արվեստի խնդիրները. դա ինքնին հասկանալի է, քանի որ Վահան Տերյանը որպես գրող մի որոշ չափով հայտնի է նաև իր թարգմանական երկերով: Շոթա Ռուսթավելու «Վագրենավորի» նախերգանքը՝ Տերյանի թարգմանությամբ՝ «արևի կտոր» է համարել Ն. Մառը: Օսկար Ուայլդի «Սալոմեն» նա թարգմանել է ոչ պակաս վարպետությամբ. ասես հստակ սաղաֆից ու ազնիվ մարմարիոնից են կերտված այդ դրամայի պատկերները: Այլևս չենք խոսում Շարլ Բողլերի, Հայնրիխ Հայնեի, Պոլ Վեռլենի - եվրոպական նշանավոր բանաստեղծների և ռուս սիմվոլիստներից Վալերի Բրյուսովի ու Ֆյոդոր Սոլոգուբի երկերի անպայման հաջող թարգմանությունների մասին, որոնք մնայուն գործեր են թարգմանական գրականության մեջ, - գրում է Սաքո Սուքիասյանն իր «Էջեր Վահան Տերյանի կյանքից» արժանահավատ ու գնահատելի մենագրության մեջ [1, էջ 70-71]:

Նշված հեղինակն իր հիշատակված գրքում ցավով է նշում, թե չունենք այս երկու նշանավոր բանաստեղծների շփման թեկուզ հակիրճ ուրվագրությունը, որն անհրաժեշտ ու կարևոր է ոչ միայն յուրաքանչյուրի բնութագրման տեսանկյունից. թե՛ Բրյուսովի և թե՛ Տերյանի մասին բավական նյութեր հրատարակված են ռուսական ու հայկական մամուլում: Հույժ կարևորը այն սերտ բարեկամությունն է եղել, որը հարատևել է ռուս և հայ գրականության միջև, իսկ Բրյուսովի և Տերյանի շփումն ինքնին մի օղակ է հանդիսացել այդ գեղեցիկ բարեկամության:

Երկու՝ մեզ համար նվիրական այս անձանց մասին խոսքն ավարտուն չէր լինի, եթե, թեկուզ շատ համառոտ չհիշատակեինք Մարգարիտա Շահխաթունու՝ Տերյանի մասին հուշերից մի կտոր՝ «Նվիրական ու անմոռաց պահեր» վերնագրով [7, էջ 377-379].

1916թ. հունվարի 18-ին Երևանում կայացավ Վ. Բրյուսովին նվիրված դասախոսությունը հայ պոեզիայի մասին:

Բրյուսովին հայ պոեզիայի հետ ծանոթացնելու, նրան այդ պոեզիայով հետաքրքրվել ու սիրել տալու գործում շատ մեծ դեր է խաղացել Վահան Տերյանը: Նրա այդ մեծ ծառայությունը՝ ռուս ընթերցողներին մեր գրականության հետ ծանոթացնելու գործում վաղուց գնահատված էր մեր գրականագետների կողմից: Տերյանը նաև Անդրկովկասի քաղաքներում Բրյուսովի դասախոսությունները կազմակերպելու գործում էր ակտիվորեն մասնակցել: Սակայն Երևանում կազմակերպված դասախոսության ժամանակ Տերյանն աչքի չընկավ.Պ. Սակինցյանի ծափահարությամբ բեմ դուրս բերեց Բրյուսովին և մի քանի խոսքով ներկայացրեց Երևանի հասարակությանը: Տերյանը նստած էր բեմի խորքում ... Գուցե Տերյանին հանդիսականները իսկի չնկատեին էլ, եթե դասախոսության երկրորդ բաժնում, երբ Բրյուսովը սկսեց խոսել նրա մասին, ինքը ետ չդառնար և ծափահարելով չներկայացներ նրան:Դահլիճի բուռն ծափահարությանը Տերյանը պատասխանեց խորը գլուխ տալով և նորից նստեց հին տեղը՝ անգամ առաջ չեկավ դեպի նախաբեմը: Ես հիացած լսում էի մեր միջնադարյան բանաստեղծների սքանչելի գործերը, որոնք հայերեն էլ չէի կարդացել, և նամանավանդ ուրախ էի, որ Բրյուսովի շնորհիվ ռուս ընթերցողը կծանոթանա ու կսիրի մեր պոեզիան:

Ընդմիջման ժամանակ Տերյանը եկավ դահլիճ, որ ինձ ծանոթացնի Բրյուսովի հետ: Մեզ ծանոթացնելուց հետո Տերյանն ասաց. «Ընհանրապես իմ հայրենիքը լի է գեղեցկություններով: Դուք իմ հայրենիքը սիրեցիք դեռ հեռվից. ինչպե՛ս կուզեի, որ այն ձեզ չհիասթափեցնի, երբ Դուք այստեղ եք»: Բրյուսովը հավաստիացրեց, որ ընդհակառակը, ինքը չափազանց զգացված է սիրալիր ընդունելությամբ, որ ցույց է տվել իրեն Երևանի հասարակությունը: Ապա դիմելով ինձ, ասաց. «Դուք հավանորեն դեռ Տերյանին չեք լսել ռուսերեն: Երկրորդ բաժնում ես կարտասանեմ Տերյանից ...»:

Բրյուսսելը ուներ արտասանության յուրահատուկ ձև, կարծես երգում էր ... Մենք բեմի ետևում էինք, երբ այնտեղ եկան մի խումբ աղջիկներ, մոտեցան Տերյանին և ջերմորեն ողջունեցին նրան: Տերյանն անակնկալի եկածի նման հարցրեց, թե երևի նրանք եկել են Բրյուսսելի հետ ծանոթանալու, բայց աղջիկները ասացին, որ հենց իր հետ են ուզում ծանոթանալ, որ Տերյանն իրենց սիրելի պոետն է և մեկը մյուսին ընդհատելով՝ հիացմունքի խոսքեր էին ասում ու արտասանում նրա ոտանավորներից: (Տերյանը կարծես խոսք չէր գտնում ասելու, բայց նրա աչքերի մեջ ինչ-որ ուրախ կրակ էր վառվում ու նա անհարմար էր զգում, որովհետև նա վստահ էր, որ այդ օրվա հերոսը Բրյուսսելն է... Այսինքն, նա այն աստիճան համեստ մարդ էր, որ քիչ թե շատ մեծ հասարակության մեջ իրեն մի տեսակ քաշված էր զգում ու քշախոս էր դառնում, բայց նեղ շրջանում, մանավանդ գրականության մասին խոսելիս նա պերճախոս ու կատակասեր էր դառնում...

Այսպիսի խորը հարգանքով ու ակնածանքով էր վերաբերվում Տերյանը Բրյուսսելին, իսկ վերջինս էլ ընդգծված համակրանքով ու գնահատանքով (տե՛ս նաև նամակները՝ երեքը՝ Տերյանից Բրյուսսելին և երկուսը՝ Բրյուսսելից Տերյանին): Այդ խորհրդանշական կապը խթան դարձավ երկու մշակույթների սերտ ու անխափան կապի, որն արտահայտվեց, այս դեպքում և մասնավորապես, թարգմանությունների ճանապարհով:

2013 թվականին Գանձայում՝ Տերյանի տուն-թանգարանի տնօրեն Վաղարշակ Թանգյանի ջանքերով ու «Մուտքով» լույս տեսած «Պոեզիա» գրքույկը խորհրդանշորեն ենթավերնագրված է Բրյուսսել, Տերյան. այստեղ զետեղված են հենց այն՝ երկուստեք կատարված թարգմանությունները (տասնմեկ ոտանավոր Տերյանի թարգմանությամբ (էջ 3-ում մեր նշած տասին այս գրքույկում ավելացել է ևս մեկը՝ «Արարատին», և դարձել 11) և յոթը՝ Բրյուսսելի), որում, եթե հեղինակների անունները չհիշատակենք, կհամարվեն զուտ հայկական կամ խիստ ռուսական. օրինակ՝

Սուգվեց ցերեկը միգում անափ
Սաստող կոհակն է շուրջըս ծեծվում,
Հուշերն են քնքուշ մի թախծությամբ
Նորից դառն համբույրն ինձ մոտեցնում:

Լցվում է փողոցն աղմուկ ու շարժում,
Դալուկ դեմքերին ծաղկում է ժըպիտ,
Փայլում են տներն արևի փոշում,
Երկինք են պարզվում ծառերը վտիտ...

Առաջինը թարգմանությունն է, երկրորդը՝ բնագիր. կարելի՞ է տարրորոշել...

Հենց սրանք են վառ ապացույցը այն հաստատման, որ թարգմանություններն են մշակույթների փոխադարձաբար հարստացման անհերքելի աղբյուրները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Սաքո Սուրբիապյան**, Էջեր Վահան Տերյանի կյանքից, Հայպետհրատ, Եր., 1959թ., 303 էջ:
2. **Վաչե Պարտիզունի**, Տերյանի կենսապատումը, Սովետական գրող, Եր., 1984, 353 էջ:
3. **Поэзия Армении**, Под редакцией Валерия Брюсова, Айастан, Ер., 1966, 511 стр.:
4. **М. Д. Амирханян**, Брюсов и Армения, Первооткрыватель армянской поэзии, Ер. , 2013, 69 стр.:
5. **Պոեզիա, Բյուսուվ, Տերյան**, Գանձա, 2013թ., 63 էջ:
6. **Венок Брюсову**, Ер. , 2012, 85стр.:
7. **Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում**, Հայպետհրատ, Եր., 1964, 583 էջ:
8. **Նինա Հարությունյան**, Չկորած անուններ, Հանրագիտարան - Արմենիկա, Եր., 2006թ., 88 էջ:

9. Նինա Հարությունյան, Մուլիկ Սեդրակյան, Պոեզիայի տերյանական օրերը Գանձայում (40 տարիների տարեգրություն), Հայաստան, Եր., 2008թ., 314 էջ:

Susanna TIOYAN

Teryan – Brusov relations

Literary works by Teryan and particularly by Brusov and their invaluable contribution in Armenian, Russian and world literature have been studied thoroughly and scrupulously throughout a century. Whereas the interference of the two literatures as a result of personal contacts of the above mentioned outstanding personalities still need to be studied thoroughly.

Summing up in this article the author tries to show the miraculous power of translation in the process of development of different cultures.